

Պազն է բռներ հուրքը սրտիս,
Չիւն է ընկեր վրան գլխուս
Ու մօրութիւն.
Տայց չէ մարտած լոյսն իմ հոգւոյն:

Խամբերգը

Վեր է մարդոց համբանիներէն
Չափն Աստղծոյ:

Պարտքը մարդոց որդիներուն
Ու զելն է միշտ
Առանց դուլի ու լքումի
Անոր ամբաւ բարութենէն:
Օրն է բարի, օր ու զելու:

Միեւ

Ահա առջիդ, թուր կայծակին.

(Մէջէն էլ +ակ Բ-ր-ր և էլ դ-կ մ-շ-ն-ին)

Ահա առջիդ, խալը հըզօր

Պատարագին:

(Կո-ր-ժ-էն էլ հ-անէ ի-ու-ը ու էլ դ-կ մ-շ-ն-ին)

Ահա ոսկի կամար գօտին:

(Կը +ակ մ-ջ-էն է-ա-մ-ր դ-ր-ին ու էլ դ-կ մ-շ-ն-ին)

Նուէր քեզի, Աստուածածին,

Հըրեղէն ծին՝

Սասմայ մեծ տան

Քուռկիկն ալուոր,

Իմ ձէլալին:

Խամբերգը

Էնդունական ընծան ըլլայ

Սասմայ իշխան

Մեր Մըհերին:

Միեւ

Մեծ տասն աւան, երկու տաս շէն

Մարութայ սուրբ եկեղեցւոյն

Նուէր ինձմէ:

Յիշատակին մեռեներուն

Սասմանց տունին,

Բարօրութեանը ողջերուն,

Ժողովուրդին,

Թող մատուցուի սուրբ պատարագ

Աւուրանցըն դատաստանի:

Խամբերգը

Յիշատակը արդարներուն

Օրնութիւնով ըլլայ ընդ միշտ:

Միեւ

Քուկդ է իմ տուն,

Սասունն ամբողջ

Աստուածածին.

Տղեկ մը մերկ,

Տայիր ինծի,
Չորցած բռնէն տարիներուս:

Խամբերգը

Էնդունական, ընդունական, ընդունական
Ուխտն ըլլայ թող
Սասմայ իշխան մեր Մըհերին:

Միեւ

Մանչ մը ժառանգ Սասմայ գաճին:

Անցնի զըլուխն այս զեղեցիկ

Լունաշաբարհի ժողովուրդին:

Պաշտպանն ըլլայ սահմաններուն,

Խաղաղութիւն՝ զիւղակներուն.

Կահան անյաղթ՝ սուրբ վանքերուն,

Ապառաժի նըման քամակ՝

Մեր զօրքերուն:

Կապէ մէջքին ոսկի գօտին.

Կողէն շողայ թուր կայծակին.

Հեծած նժոյզը հըրեղէն

— Քուռկիկն իմ բաց — ,

Աջ թեւին՝ խաչ պատարագին.

Պըտըտցընէ ահը Սասմայ

Արեւելքին ու հարաւին.

Կապէ թեւերն իսկ հաւքերուն

Անցնիլ սարէն, քու դռներէն.

Ուժերն աղտոտ վիհմակներուն

Արեւելքին ու հարաւին.

Զաւակ մը մանչ,

Չորցած բռնէն տարիներուս:

(Կը +ա-շ-է մ-է-ր-է, ա-ա-ն-ց հ-ը-ս-է-ւ-է, ի-ո-ր է-ր-ի-ւ-շ-ո-ւ-ի-ւ-ս-ը-ր-է)

Թալին

(Բ-ա-շ-է-ս-ր-ա-ծ : ձերման հաշ-ը-ը լ-ս-ս-ո-ր-է էլ յ-ը-ը-ն-ին դ-է-ս-ո-ն ա-ր-է-լ-ս-ը : Պարը է ու չ-ս-է-ր-է)

Տէր երկնաւոր,

Քու զութն հասաւ չոր Սառային,

Ցովակիմին ու Սննային, Եղսաբեթին,

Մարմիններէն անոնց սառած

Ծնունդ տալու քու սուրբերուդ.

Մօրկանդ անուշ պաղատանքով

Դուն մարդասէր Յիսուս Քրիստոս,

Քակէ մարմնէս հանգոյցը պիղծ

Իմ ամլութեան:

Աղախինին քո սա թշուառ

Տուր զերմանալ

Կըրակովը մայր ըլլալու.

Անուշութիւնն ըզզաւ կուրծքիս

Մանկան միսին,

Հանոյըն անմատ՝ կաթ բաշխելու

Արտև վրթած շրթունքներուն
իմ ձագուկիս .

Զաւակ մը , Տէր , ջրցած բռնէն
Տարիներուս :

Խարզագիր

Օրինակ ևս դուն , կիներուն մէջ ,
Մայր Աստուծոյ .

Պրոտուղին օրինեալ՝ որովայնիդ ,
Մայր Աստուծոյ .

Էրէ քու միրտ բաց բոլորին
հինդիքներուն ,

Թագաւորէն մինչեւ որբին
Մայր Աստուծոյ :

Խարիւրը

Ալէլուխա , Ալէլուխա

Օրինըրած է ան որ կուգայ

Անուամբ Հօր

Եւ Արգւայ

Եւ Սուրբ Հոգւոյն :

(Խոր Հայութեան : Ուրէ վեր Ռէն շաքար շաքար
Բանանի լուսակն Հրեշտակին ակաց և շաքար ,
Հիշուաց ապէտան)

Ճրեօսակիր

Ողջոյն Սասունի հզօր իշխանին :

Ողջոյն բարեպաշտ անոր կողակից
Թալին տիկինին :

Ողջոյն Սասունի շէն ժողովուրդին :

Հասաւ ձայնը ձեր

Աստուծոյ գահին

Միջնորդութեամբը Սուրբ Կոյս Մարիամին :

Անոնիս ձեզի ,

Ժառանգ կ'ունենայ

Երկիրը Սասնայ :

Խարիւրը

Փառք բարձունքներու

Բարի Աստըծուն :

Ճրեօսակիր

Զըսի ամէնը : Լաւ ըրէք մակի :

— Սասնայ իշխանն , իշխանուեին

Ծնունդ տալէ վերջ ժառանգին

Նոյն օրուան մէջ ու նոյն ժամուն

Պիտի յանձննեն իրենց նոզին

Մէջն իմ ձեռքին :

Սասնոյ իշխանն , իշխանուեին

Կ'ընդունին զինն իրենց զաւկին , —

Կը հարցնէ Տէրն իմ բերնով :

Միեր

Թող օրինուի կամքն Աստուծոյ .

Ո՞վ յաւիտեան մնացեր հոս :

Թող զայ ժառանգն իմ արիւնէն .

Գոցուին աչքերն իմ այս խաղաղ

Լոյս աշխարհին :

Շոցն ևս իշնեմ գերեզմանին ,

Աւ ինձի նետ , մայրը զաւկին

Թալին տիկին :

Թող օրինուի կամքն Աստուծոյ :

Խոսէ , թալին , բուկդ է կարզը :

Ճրեօսակիր

Դժուար՝ սրաէդ վըրթած որդին

Յանձնել օտար բատինքներու .

Բայց բանի որ կամքն Աստուծոյ

Կ'ուզէ այդպէս ,

Ես աղախին , զետնի փոշի ,

Կը խոնարհիմ , այս բուգէին ,

Իր պատգամին :

Մէկ հատ փափար ,

Խմ հըրեշտակ .

— Տամ ժում մը կաթ

Իմ ձագուկին .

Պազնեմ բերնիկն անոր մէկ հետ .

Յետոյ գոցուին թող իմ աչքեր

Այս աշխարհին :

Մէկ բարձի ենք բառաւուն տարի

Ապրեր սիրով .

Թող քընանանք մննք նոյն բարձին մնանակ

Մհերին հետ

Աւուրանցըն դատաստանին .

Օրինեալ ըլլայ կամքն Աստուծոյ :

Ճրեօսակիր

Ինը ամիս ու ինն օրէն ,

Ինը ժամէն վերջ սա պահուն ,

Թալին տիկին ,

Դուն կը բերես այս աշխարհին

Ժառանգը մնէ .

Ան որ կոչուի պիտի դարեր

Սասնայ Դաւիթ .

Բազկով անյաղթ ,

Մարմնով անեղ ,

Առիւծ պաշտպան

Սա բարեպաշտ ժողովուրդին .

Ինկէք ծունկի դուք սեղանին

Մարութայ Սուրբ Աստուծածնին :

(Կը Ճար-Շեւ Բուշրէ)

Խարիւրը

Թող օրինուի ան որ կուգայ

Անուամբ Հօր եւ Արգւայ եւ Հոգւոյն Սրբոյ .

Գ. Ա. Բ. Ա. Գ. Ա. Յ. Բ. Բ. Բ.